ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՆԵՏԻԿ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԾՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ

WITH FUNDING FROM
AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION

ՏՈՀՄԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ և ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԿԱՅՔ

Բովանդակություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2

1 ՆԱԽԱԲԱՆ 3

1.1. Աշխատանքի նպատակներն ու շրջանակը 3

1.1.1. Աշխատանքի ընդհանուր նպատակը 3

1.1.2. Շահառու խմբերը 3

2 ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 4

3 ԿԱՅՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 5

3 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 6

3.1 Արգելափակում 6

3.2 Գաղտնաբառի բարդություն ..... Error! Bookmark not defined.

3.3 Գաղտնաբառի փոփոխություն ..... Error! Bookmark not defined.

3.4 Արտոնության սահմանում 6

3.5 Տեղեկատվության ջնջում 6

3.6 Հավելվածի արդիականություն 6

1 Նախաբան

1.1. Աշխատանքի նպատակներն ու շրջանակը

1.1.1. Աշխատանքի ընդհանուր նպատակը

ՔԱՐԴ հիմնադրամը «ՀՀ-ում կենդանիների համարակալաման և հաշվառման համակարգի ներդրում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսավորմամբ, նախտեսում է ստեղծել արտերկրից ներկրված տոհմային կենդանիների՝ մասնավորապես Ավստրիայից ներմուծված ավելի քան 2000 գլուխ Տոհմային կենդանիների համարակալման և հաշվառման տվյալների կառավարման էլեկտրոնային համակարգ եւ հանրային հասանելիության կայք, որն էլ իր հերթին կնպաստի ՀՀ-ում տոհմային գործի վարմանը և զարգացմանը:

Համակարգը ստեղծվում է՝ կենդանիների մասին մինչեւ 3-րդ սերնդի տոհմային տվյալների հավաքագրման, պահպանման, վերլուծության եւ կիրառման համար: Այն կբարձրացնի տվյալների համախմբման, կիրառման եւ կառավարման հնարավորությունները, իսկ կայքի շնորհիվ կապահովվի տեղեկատվության եւ կապի հնարավորություն ֆերմերների եւ հանրության շրջանակում: Համակարգը կունենա այլ համակարգերին հեշտությամբ ինտեգրման հնարավորություն՝ ապագայում վերջինիս հնարավորությունների մեծացման համար:

1.1.2. Շահառու խմբերը

Շահառու խմբերն են՝

- հայաստանի Գենետիկ Անասնաբույծների Ասոցիացիա անդամները
- տոհմային կենդանիների բուծմամբ զբաղող ֆերմերները
- հանրությունը:

2 Մոդուլների ընդհանուր նկարագիրը

«Տոհմային կենդանիների համարակալման և հաշվառման տվյալների էլեկտրոնային կառավարման համակարգի» մոդուլները.

- **M1: Օգտատիրոջ կառավարում**. բաղադրիչ, որտեղ առկա են օգտատերերին առնչվող տեղեկատվության և հնարավորությունների կառավարումը, օգտատերերի տեսակները և նրանց արտոնությունները: Այս բաղադրիչի միջոցով սպասարկվում են յուրաքանչյուր օգտատիրոջ արտոնությունները: Առկա է դերերի, իրավասությունների և հասանելությունների կառավարման գործիք, որը թույլ է տալիս ստեղծել համակարգի ցանկացած մոդուլի և գործառույթի օգտագործման թույլտվություններ, խմբեր և այլն: Ընդ որում Դերային ճկուն համակարգում պետք է գործում է Արտոնությունների միջոցով կարգավորվող գործառույթներ՝ հնարավորություն՝ կառավարելու եւ/կամ հասանելիություն ունենալու կամայական էջի տեղեկատվությանը կամ գործառույթին:
- **M2: Ադմինիստրատիվ մաս**. այս բաղադրիչի միջոցով կառավարվում են համակարգի բոլոր կարգավորումները: Այն ներառում է նաև ընդհանուր օգտագործման աղյուսակների ստեղծումը, որոնք օգտագործվում են այլ բաղադրիչների կողմից:
- **M3: Հիմնական տվյալների ռեեստր**. այս բաղադրիչում ներառված են բոլոր գործողությունները՝ կապված՝
    - կենդանատերերի գրանցման,
    - ականջապիտակների մուտքագրման եւ կենդանիների գրանցման,
    - սերմնահեղուկի գրանցման,
    - սերմնատու ցլի գրանցման հետ:
- **M4: Դաշտային հետազոտության իրականացում եւ կառավարում.** այս բաղադրիչի միջոցով իրականացվում եւ կառավարվում են դաշտային հետազոտությունները: Առկա են վերջավոր քանակի հետազոտությունների մոդելներ:
- **M5: Խելացի որոնումներ եւ հաշվետվություն.** այս բաղադրիչի միջոցով կատարվում է տվյալների բազմաբաղադրիչ որոնում, արդյունքների դիտում և դուրսբերում էքսել ֆայլային տարբերակով՝ սյուների ընտրությամբ, հաշվետվությունների տպում:
- **M6: Ինտեգրացիա EMS2 եւ Nikita Mobile համակարգերի հետ.** այս բաղադրիչի միջոցով կատարվում է ինտեգրացիա նշված համակարգերի հետ՝ կենդանու մորթի մասին տվյալի ինքնաշխատ ստացման եւ ըստ անհրաժեշտության sms հաղորդագրությունների ուղարկման համար: Հնարավոր է իրագործել՝ երկկողմ համաձայնության պարագայում:

- **M7: Կենդանիների բանաձեւային ինդեքսավորում.** այս բաղադրիչի միջոցով հնարավոր է իրականացնել կենդանիների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության եւ որոշակի բանաձեւերի կիրառմամբ կենդանիների ինդեքսավորում եւ դասակարգում՝ ըստ տրամադրված ցուցանիշների:

- **M8: Տոհմային քարտ՝ QR-ով.** այս բաղադրիչի միջոցով հնարավոր է գեներացնել տոհմային քարտ՝ QR-ով, որի սքանավորման դեպքում հասանելի կլինի նախանշված տեղեկատվությունը:

- **M9: Ծանուցումներ.** այս բաղադրիչի միջոցով հնարավոր է էլ.փոստով, կարճ հաղորդագրությամբ կամ համակարգի ներսի միջավայրում ստանալ նախապես ձեւավորված ծանուցումներ՝ համակարգի որոշակի գործողության հետեւանքով, այդ թվում՝ հիշեցում, նախազգուշացում, հավաստում, տեղեկացում, եւ այլն:

- **M10: Ժամկետների պլանավորման եւ կառավարման բաղադրիչ.** այս բաղադրիչի շնորհիվ հնարավոր է պլանավորել նախապես նշված գործողությունների ժամկետները եւ սահմանել որոշակի գործողությունների կատարում՝ կապված յուրաքանչյուր ժամկետի հետ:

- Բոլոր բաղադրիչները փոխադարձաբար կապակցված են:

3 Կայքի նկարագիրը

Կայքը տեղեկատվական միջավայր է, որի միջոցով հնարավոր է համարկալված և հաշվառված տոհմային կենդանիների մասին որոշակի տեղեկատվություն հասանելի դարձնել հանրությանը : Կայքն ունի՝

- առաջին էջի համապատասխան դիզայն, որը կարող է փոփոխվել մինչեւ 2 անգամ,
- մենյու՝ տեղեկատվական միատեսակ ֆունկցիոնալությամբ էջերով եւ դրանց դիզայնով
- երկլեզու (Hy/En) համահավասար ֆունկցիոնալություն:

Կայքը կառուցվում է ընդհանուր 5-10 էջի եւ համապատասխան ֆունկցիաների շրջանակներում:

3 Անվտանգություն

Համակարգում կիրառվում են անվտանգության հետեւյալ գործիքները՝

3.1 Արգելափակում

Օգտանուն/գաղտնաբառ համադրության բազմակի սխալ մուտքի դեպքում օգտատերը արգելափակվում է՝ համակարգով նախանշված ժամանակով:

3.2 Արտոնության սահմանում

Արտոնությունների սահմանմամբ սահմանափակվում է տարբեր օգտատերերի գործառութային հնարավորությունները, որոնք համակարգից փոխանցվում են հավելվածին:

3.3 Տեղեկատվության ջնջում

Հավելվածից ելքագրումից հետո հավելվածի ներքին հղումները դառնում են անհասանելի:

3.4 Համակարգի հասանելիություն

Համակարգի հանձնման օրվա դրությամբ այն պետք է հասանելի լինի տարածված դիտարկիչների՝ առնվազն ամբողջ թվով վերջին տարբերակներով: